ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «09» դեկտեմբերի 2022թ № 2024-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԾՐԱԳԻՐԸ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 17-րդ ենթակետով և 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) 2023 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) 2023 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) 2023 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Լիլիթ Հակոբյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության

պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սուսաննա Հակոբյանին՝ հրամանը հաստատվելուց հետո 2-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2022 թվականի դեկտեմբերի « 9 -ի..... »
N2024Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

2023ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) վիճակագրական տվյալների համաձայն՝ 2021 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը 2020 թվականի համեմատ աճել է 4%-ով, սակայն, նախնական գնահատումների համաձայն, այն 72%-ով ցածր է եղել 2019 թվականի նախահամաճարակային տարվա մակարդակից (2019 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունները 2018 թվականի համեմատ 4 տոկոս աճ էին գրանցել՝ հասնելով շուրջ 1,5 մլրդի):

Համաձայն ՄԱԿ ԶՀԿ բարոմետրի տվյալների՝ 2022 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում միջազգային զբոսաշրջային այցելությունները գրեթե եռապատկվել են (համեմատած 2021 թվականի նույն ժամանակահատվածի հետ՝ արձանագրվել է այցելությունների 172% աճ): Սա նշանակում է, որ վերականգնվել է նախահամաճարակային ժամանակահատվածի զբոսաշրջային այցելությունների գրեթե 60%-ը:

2. Հայաստանում, համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների, 2021 թվականին Հայաստան զբոսաշրջային այցելությունները կազմել են 870.308՝ 2020 թվականի համեմատ ապահովելով շուրջ 130% աճ: Սակայն, 2019 թ. համեմատ 2021թ. զբոսաշրջային այցելությունները նվազել են շուրջ 54 %-ով (2019 թվականին զբոսաշրջային այցելությունները 1.894.377 էին՝ 2018 թվականի համեմատ ապահովելով 14.7 % աճ):



Նախնական տվյալներով 2022 թվականի հունվար-նոյեմբերին Հայաստան զբոսաշրջային այցելությունները կազմել են շուրջ 1,542,000: Միայն նոյեմբերին Հայաստան զբոսաշրջային այցելությունները կազմել են 144,576՝ 2021 թվականի նոյեմբեր ամսվա 85,762 համեմատ ապահովելով 68 % աճ:

Համաձայն սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի տվյալների՝ 2022 թվականի հունվար-նոյեմբերին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ ապահոված 5 երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, ԱՄՆ-ն և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը:

Ըստ քաղաքացիության	**Զբոսաշրջիկների թվաքանակը**	**Ընդհանուրի մեջ %**
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	727,070	47%
ՎՐԱՍՏԱՆ	151,371	9.8%
ԻՐԱՆ	107,649	7.0%
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	49,181	3.2%
ԳԵՐՄԱՆԻԱ	22,865	1.5%

3. Հիմք ընդունելով 2013 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները՝ փորձագիտական գնահատականներով 2019 թվականին ներգնա զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ 1500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներգնա զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):

Սույն Ծրագրով նախատեսվում է 2023 թվականին իրականացնել զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտությունը, ինչը կնպաստի զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարած ծախսերի կառուցվածքի վերաբերյալ հնարավորինս ճշգրիտ տվյալների ստացմանը և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացմանը:

4. 2019 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.544.600՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ապահովելով 41.4% աճ: Ներքին զբոսաշրջության աճին նպաստում է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը՝ ապահովելով ներքին զբոսաշրջային այցելությունների շուրջ 10-15%-ը:

2022 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 278.978՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովելով շուրջ 29,1 % աճ:

5. Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ 2022 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործում են ավելի քան 915 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի, զբոսաշրջային տուն, ճամբար), որոնց համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար ավելի քան 15.000 և 30.000: Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից շուրջ 35%-ը գտնվում է Երևանում, շուրջ 65%--ը՝ ՀՀ մարզերում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Զբոսաշրջության զարգացումը նպաստում է ազգային եկամտի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը, մասնավորապես՝

- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը.

- Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը.
- Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և տեղեկատվական համակարգի կատարելագործմանը:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի նպատակն է նպաստել.

1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը և ներքին զբոսաշրջության խթանմանը.
2) Հայաստանում զբոսաշրջիկների գտնվելու ժամանակահատվածի երկարաձգմանը և ծախսի հնարավորությունների ընդլայնմանը.
3) համաշխարհային զբոսաշրջային քարտեզում Հայաստանի դիրքի բարելավմանը.
4) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը.
5) ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը.
6) զբոսաշրջության ոլորտի կրթության և մասնագիտական որակավորման համակարգի ամրապնդմանը.
7) միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը:

8. Ծրագրի խնդիրներն են.

1) համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես կայուն, ապահով և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում, զարգացում և խթանում.
2) նոր, մրցունակ արդյունքի ձևավորում .
3) զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանն ուղղված ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում.
4) միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում.
5) վիճակագրական տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմի ստեղծում:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

9. Ծրագրի իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության մակարդակի բարձրացմանը, համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդմանը՝ համաշխարհային շուկայում բարելավելով Հայաստանի վարկանիշը:

Ակնկալվող արդյունքներն են՝

1) միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ տարեկան մինչև 10%.
2) վիճակագրական համակարգի բարելավում, տվյալների հավաքագրում.
   - **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և սպասարկման հետ կապված ծառայությունների ձեռքբերում»** միջոցառման իրականացմամբ նախատեսվում է
     - Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության իրականացում.
     - Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում. ըստ զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարված ծախսերի ճշգրիտ տվյալների ստացում և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացում.
     - Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և տարեկան սպասարկում
3) մարքեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում միջազգային զբոսաշրջային շուկայի և զբոսաշրջության զարգացման միտումների վերլուծության արդյունքում նոր թիրախային շուկաների ընտրություն և ակտիվ մարքեթինգային միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝
   - **Մասնակցություն առնվազն չորս միջազգային ցուցահանդեսներին՝** հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն

   Զբոսաշրջության կոմիտեն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների մասնակցության ընտրությունը կատարում է՝ հիմնվելով թիրախային երկրներում մարքեթինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրներում, Պարսից ծոցի արաբական և Եվրոպական միության անդամ պետություններում

անցկացվելիք ամենախոշոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցության նպատակահարմարության սկզբունքի վրա:

- **Միջազգային և թիրախային առնվազն 4 ավիաընկերությունների հետ համագործակցության շրջանակում մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում՝**

Զբոսաշրջության կոմիտեի կողմից միջազգային և թիրախային ավիաընկերությունների ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների (Luftansa, AirFrance, FlyDubai, Austrian Airlines, Aegean Airlines, FlyArna և այլն) հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների (Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրման, տվյալ ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացման, գովազդների տեղադրման և այլ ծառայությունների) ձեռքբերման վրա:

- Թիրախային երկրների օնլայն և օֆլայն հ**եղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին առնվազն 9 գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում՝**այդ թվում
  - 34Travel առցանց ճամփորդական պարբերականում (իրավաբանական անվանումը՝ ԱՁ Կաշլիկով Անտոն (Физическое лицо-предприниматель Кашликов Антон).
  - АК Россия ավիաընկերության պատկանող ամսագրում (իրավաբանական անվանումը՝ ООО Аэрогрупп).
  - ԱՄԷ-ի հայտնի պարբերականում՝ Gulf Business/Business Traveller (մեդիա հոլդինգի իրավաբանական անվանումը՝ Motivate Media Group)
  - ԱՄԷ հայտնի պարբերականում՝ Black Watch Communications LLC.
  - Բրիտանական National Geographic, The Guardian Travel Guide (իրավաբանական անվանումը՝ APL LLC) և BBC Wildlife կամ Հոլդինգի այլ պարբերականներում (BBC Holding).
  - հեղինակավոր այլ պարբերականներում.

Զբոսաշրջության կոմիտեն միջազգային պարբերականներ ընտրելիս առաջնորդվում է հետևալ սկզբունքներով.

- պարբերականի թիրախային լսարանը պետք է համապատասխանի Զբոսաշրջության կոմիտեի տարեկան մարքեթինգային գործողությունների ծրագրում ընդգրկված թիրախային շուկաներին.
- պարբերականը պետք է ունենա ճամփորդական ուղղվածություն, թիրախավորի անհատ զբոսաշրջիկներին, հանդիսանա ոլորտային առցանց հարթակ, որը տեղեկություններ է տրամադրում զբոսաշրջիկներին ճամփորդական ուղղությունների վերաբերյալ.
- պարբերականը պետք է ներկայացված լինի բոլոր հայտնի սոցիալական հարթակներում, ունենա օգտատերերի (ճամփորդողների) շտեմարան, որոնց պարբերաբար ուղարկում է անհատական ծանուցումներ.
- տպագիր ճամփորդական պարբերականի դեպքում, այն պարտադիր պետք է ունենա նաև առցանց հարթակ/կայք, որտեղ տեղ կգտնեն և կտարածվեն պատվիրված հոդվածները նույնպես:

➢ **Թիրախային առնվազն 3 երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում՝**

Զբոսաշրջության կոմիտեի կողմից գովազդային արշավների (road show) կազմակերպման համար երկրների ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով թիրախային երկրներում մարքեթինգային գործողությունների, սոցիալական հարթակներում մասնավոր հատվածի շրջանում հարցման, ինչպես նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Բալթիկ երկրներում, Իրանում, ԱՄԷ-ում գովազդային արշավների (road show) իրականացման առաջնահերթության սկզբունքի վրա:

➢ Թիրախային շուկաներից (Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄԷ, Մեծ Բրիտանիա, Վրաստան, ԱՄՆ և այլ երկրներ) Հայաստան **առնվազն 8 միջազգային ճանաչողական այցերի կազմակերպում**, որը կներառի հյուրանոցային, տրանսպորտային, զբոսավարի, սննդի ծառայություններ: Թիրախային շուկաներում Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով օտարերկրյա լրատվության միջոցների ներկայացուցիչների, նկարահանող խմբերի, բլոգերների, ճանաչված և ազդեցիկ մարդկանց, և այլ անձանց Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում

➢ Թիրախավորված (առնվազն 20 հազար հատ) **գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում՝** Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի

ճանաչելիությանն ուղղված գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում երկրի գրավչությունները ներկայացնող միջոցառումների շրջանակներում.

- **Զբոսաշրջության ոլորտին առընչվող միջոցառումների լուսաբանմանն ու տարածմանն** ուղղված ծառայությունների ձեռքբերում՝ լուսանկարահանում, տեսանկարահանում, հանրության իրազեկմանն ուղղված հաղորդումների ստեղծում, հանրությանը ընթացիկ նախագծերի մասին իրազեկում
- Էլեկտրոնային մարքեթինգի իրականացում՝
    - **Թվային և սոցիալական հարթակների վարում** առնվազն 7 թիրախային երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԱՄԷ, ՌԴ, Իրան, Բալթյան երկրներ, Վրաստան), ինչպես նաև Հայաստանում. Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում՝ սոցիալական հարթակներում (FB, Instagram, Twitter, YouTube, armenia.travel և այլն) գովազդատեղեկատվական նյութերի տեղադրման, առաջատար ճամփորդական հարթակների (TripAdviser, Booking.Com, Sletat.ru և այլն) հետ համագործակցությամբ համատեքստային գովազդի միջոցով,
    - **Travelinsights հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան սպասարկում.**
    - Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող (Armenia.travel) կայքի սոցիալական պաշտոնական էջերի հետևորդների թվային ցուցանիշերի աճի ապահովում. **Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում**
    - **Տեքստերի բովանդակության ստեղծում**, այդ թվում՝ Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող գրքույկ/ամսագրի տեքստային բովանդակության մշակում, Armenia.travel կայքի համար 30 էջերի համար հոդվածների պատրաստում, թեմատիկ օրացույցի, բլոգ փոստերի կազմում:

4) դիվերսիֆիկացված և մրցունակ զբոսաշրջային առաջարկներ՝ Հայաստանում առնվազն **ութ փառատոնի, ներքին շուկայում մեկ ներքին ցուցահանդեսի, առնվազն տասը զբոսաշրջային բիզնես նախաձեռնությունների** և այլ զբոսաշրջային միջոցառումների անցկացմանն աջակցություն,
5) ենթակառուցվածքների և ծառայությունների որակի բարելավմանն ուղղված աջակցություն
    - **տարեկան առնվազն 6 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի գործունեությանը,**

- **առնվազն 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO) գործունեությանը,**
- **մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված առնվազն 3 դասընթացների կազմակերպմանը:**

6) զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած միջազգային համագործակցություն, այդ թվում առնվազն երկու **միջազգային միջոցառման կազմակերպում:**

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

10. Զբոսաշրջության զարգացման 2023 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեն է՝ 1,0 միլիոն ՀՀ դրամի չափով, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներ (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

11. Հավելված 2-ով նախատեսված միջոցառումներն իրականացվում են մրցույթային կարգով, բացառությամբ Հավելված 2-ի 2.1, 2.2 և 2.3 կետերով նախատեսված միջոցառումների՝ օտարերկրյա կազմակերպություններին անմիջական փոխանցմամբ:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2022 թվականի դեկտեմբերի « 09 »
N 2025- Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
2023 ԹՎԱԿԱՆԻ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համա-կատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
		1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ				
1.1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և սպասարկման հետ կապված ծառայությունների ձեռքբերում**	Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության իրականացում. Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրում. Գործող համակարգչային ծրագրի բարելավում	Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտություն զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարված ծախսերի կառուցվածքի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացում և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացում. Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և տարեկան սպասարկում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

		2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ				
2.1	**Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում. հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում. ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն	Առնվազն 4 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն՝ ապահովելով յուրաքանչյուր ցուցահանդեսին առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն (ըստ Զբոսաշրջության կոմիտեի ընտրության)	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային ցուցահանդես կազմակերպող արտերկրյա կազմակերպություն)	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.2	**Միջազգային և թիրախային ավիաընկերությունների հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում**	Համագործակցություն դեպի Հայաստան չվերթեր իրականացնող ավիաընկերությունների հետ. Հայաստանի մասին տեղեկատվական նյութերի տպագրում, ավիաընկերությունների թվային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ ուղղության ներկայացնում, գովազդների տեղադրում	Առնվազն 4 ավիաընկերությունների հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում (ըստ Զբոսաշրջության կոմիտեի ընտրության)	Զբոսաշրջության կոմիտե (Միջազգային ավիաընկերություններ շահագործող արտերկրյա կազմակերպություններ)	2023 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.3	**Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	Թիրախային երկրների օնլայն և օֆլայն պարբերականներում Հայաստանի մասին հոդվածների տպագրում՝ ներկայացնելով Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ ուղղություն և ծրագրավորելով	Առնվազն 9 հեղինակավոր պարբերականում Հայաստանը ներկայացնող նյութերի (տպագիր կամ էլեկտրոնային հոդված և այլ) հրապարակում (Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե (Օտարերկրյա հեղինակավոր պարբերականներ ներկայացնող	2023 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Հայաստան այցելությունը՝ որպես առաջիկա ճանապարհորդությունների մեջ առաջնահերթություն.		արտերկրյա կազմակերպություններ)		
2.4	**Թիրախային երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում**	Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում, զարգացում և խթանում. Թիրախային երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում՝ թիրախային երկրների զբոսաշրջային օպերատորներին Հայաստանի զբոսաշրջային առաջարկների ներկայացում. զբոսաշրջային ընկերությունների ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության համար կապերի հաստատում.	Հայաստանը ներկայացնող առնվազն 3 գովազդային արշավի իրականացում նպատակային շուկաներում (շնորհանդեսների, մշակութային միջոցառումների կազմակերպում, հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում և այլն)	Զբոսաշրջության կոմիտե	2023 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.5	**Միջազգային ճանաչողական այցերի կազմակերպում**	Թիրախային շուկաներում Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով օտարերկրյա լրատվության միջոցների ներկայացուցիչների, նկարահանող խմբերի, բլոգերների, ճանաչված և ազդեցիկ մարդկանց և այլ անձանց Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում	Զբոսաշրջային տարբեր նպատակային շուկաներից առնվազն 8 ճանաչողական այցերի կազմակերպում Յուրաքանչյուր այցի արդյունքում հոդվածների, հաղորդաշարերի, նկարահանված կամ տպագրված նյութերի ստեղծում և տարածում:	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում. Զբոսաշրջային հոսքերի ավելացում				
2.6	**Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձերքբերում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝ տարբեր լեզուներով և բովանդակությամբ և տպագրություն	Առնվազն 20.000 հատ գովազդատեղեկատվական նյութեր՝ բրոշյուր, քարտեզ, տեղեկատվական թերթիկ և այլն (Զբոսաշրջության կոմիտեի պատվերին համապատասխան)	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.7	**Զբոսաշրջության ոլորտին առընչվող միջոցառումների լուսաբանում ու տարածում**	Զբոսաշրջության ոլորտին առնչվող միջոցառումների լուսաբանմանն ու տարածմանն ուղղված ծառայությունների ձեռքբերում. Հանրությանը ընթացիկ նախագծերի մասին իրազեկում	Լուսանկարահանում, տեսանկարահանում, հանրության իրազեկմանն ուղղված հաղորդումների ստեղծում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.8	**Թվային և սոցիալական հարթակների վարում**	Թվային և սոցիալական հարթակների վարում. Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում. նպատակային այցելուների գրավում.	Հայաստանը ներկայացնող թվային և սոցիալական հարթակների վարում առնվազն 7 թիրախային երկրներում (ըստ Զբոսաշրջության կոմիտեի ընտրության)	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.9	**Travelinsights հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան**	Travelinsights հարթակում նոր ալգորիթմի ստեղծում և տարեկան սպասարկման ապահովում	Travelinsight.ai տարեկան սպասարկում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով

	սպասարկման ապահովում					չարգելված այլ աղբյուրներ
2.10	**Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում**	Armenia.travel հարթակի անխափան աշխատանքի ապահովում, կայքի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրների լուծում: Արդիական բովանդակության տեղադրում կայքում: Վեբ կայքի և զբոսաշրջության կոմիտեի տարբեր ծրագրերի համար անհրաժեշտ թվային գործիքների ձեռքբերում ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման համար Armenia.travel կայքի տեխնիկական սպասարկում, ինչպես նաև Զբոսաշրջության կոմիտեի սոցիալական հարթակներում պաշտոնական էջերի վարման, գովազդների ակտիվացման աջակցություն. Թվային մարքեթինգային գործիքների միջոցով իրականացվող ծրագրերի՝ այդ թվում մարքեթինգային և խթանման միջոցառումների արդյունավետության բարձրացում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե
2.11	**Տեքստերի բովանդակության ստեղծում**	Տեքստերի բովանդակության ստեղծում. Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող տեքստային բովանդակության մշակում. Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող Armenia.travel վեբ կայքի համար մրցունակ տեքստային բովանդակության ստեղծում	Հայաստանի զբոսաշրջային առաջարկը ներկայացնող գրքույկ/ամսագրի տեքստային բովանդակության մշակում. Armenia.travel կայքի 30 էջերի համար հոդվածների պատրաստում. թեմատիկ օրացույցի, բլոգ փոստերի կազմում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ

3.1	**Պետական աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը**	զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնմանն ու զարգացմանը, հյուրընկալող և շրջական համայնքներում տնտեսական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստում	Հայաստանում առնվազն 8 փառատոնի կազմակերպմանը աջակցություն Համայնքներում համաչափ տարածքային տնտեսական և զբոսաշրջության զարգացմանը նպաստում,	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2	**Ներքին շուկայում ներքին ցուցահանդեսի կազմակերպում**	Ներքին զբոսաշրջության զարգացում ՀՀ 10 մարզերի հետ համագործակցություն՝ զբոսաշրջային առաջարկների ներկայացում	Առնվազն 1 ներքին ցուցահանդեսի կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.3	**Աջակցություն զբոսաշրջային բիզնես նախաձեռնություններին**	Զբոսաշրջային առաջարկի հարստացում. Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարձրացման համար նոր զբոսաշրջային առաջարկի ստեղծում	Առնվազն 10 բիզնես նախաձեռնություններին աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը**	Հայաստանում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, առնվազն երկու միջոցառման կազմակերպում	Առնվազն 6 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը աջակցություն. Առնվազն երկու միջոցառման կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.2	**Պետական աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը**	Մարզի զբոսաշրջային ներուժի վերհանում. Առնվազն 3 զբոսաշրջային նոր արդյունքների ստեղծում	ՀՀ մարզերում առնվազն 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.3	**Մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում**	Զբոսաշրջության ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	ՀՀ մարզերում առնվազն 3 դասընթացի կազմակերպում, այդ թվում՝ • Զբոսաշրջային ծառայություններ մատուցողների համար • Հյուրընկալության ոլորտի աշխատողների համար • Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար Յուրաքանչյուր դասընթաց՝ - կազմված 2 խմբից,	Զբոսաշրջության կոմիտե	2023 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			- առնվազն 40 որակյալ վերապատրաստված մասնագետ			
5. Միջազգային համագործակցություն						
5.1	**Միջազգային միջոցառումների կազմակերպում**	Միջազգային համագործակցության ամրապնդում և ակտիվացում, միջազգային և տարածաշրջանային համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում	Զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած միջազգային համագործակցություն, այդ թվում առնվազն երկու միջազգային միջոցառման կազմակերպում Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցա-ռումներին մասնակցություն, Երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում	Զբոսաշրջության կոմիտե	2023թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

Հավելված N3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի
դեկտեմբերի -ի N -Ա հրաման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»
2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2023թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները առանց ԱՀՀ	ԱԱՀ	2023թ. Ընդամենը ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները
	1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ			
1.1	Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և սպասարկման հետ կապված ծառայությունների ձեռքբերում (12 ամիս)	7,500	1,500	9,000
2	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**	487,320	40,680	528,000
2.1	Մասնակցություն միջազգային առնվազն 4 զբոսաշրջային ցուցահանդեսներին	180,000	0	180,000
2.2	Միջազգային և թիրախային առնվազն 4 ավիաընկերությունների հետ համագործակցության շրջանակներում մարքեթինգային ծառայությունների ձեռքբերում	50,000	0	50,000
2.3	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին առնվազն 9 գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	54,000	0	54,000
2.4	Թիրախային առնվազն 3 երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում	50,000	10,000	60,000
2.5	Միջազգային առնվազն 8 ճանաչողական այցերի կազմակերպում	33,330	6,670	40,000
2.6	Գովազդատեղեկատվական առնվազն 20000 հատ նյութերի ստեղծում, ձեռքբերում	40,000	8,000	48,000
2.7	Զբոսաշրջության ոլորտին առընչվող միջոցառումների լուսաբանում ու տարածում (12 ամիս)	8,330	1,670	10,000
2.8	Թվային և սոցիալական առնվազն 7 հարթակների վարում	40,830	8,170	49,000
2.9	Travelinsights հարթակում նոր ալգորիտմի ստեղծում և տարեկան սպասարկում (12 ամիս)	10,000	2,000	12,000
2.10	Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում (12 ամիս)	13,000	2,600	15,600
2.11	Տեքստերի բովանդակության ստեղծում (12 ամիս)	7,830	1,570	9,400
3	**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ**	233,330	46,670	280,000
3.1	Պետական աջակցություն Հայաստանում առնվազն 8 փառատոների կազմակերպմանը	166,660	33,340	200,000
3.2	Ներքին շուկայում առնվազն 1 ներքին ցուցահանդեսի կազմակերպում	25,000	5,000	30,000
3.3	Աջակցություն զբոսաշրջային առնվազն 10 բիզնես նախաձեռնություններին	41,670	8,330	50,000
4	**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	52,500	10,500	63,000
4.1	Պետական աջակցություն զբոսաշրջային առնվազն 6 տեղեկատվական կենտրոնների գործունեությանը	22,500	4,500	27,000
4.2	Պետական աջակցություն առնվազն 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը	17,500	3,500	21,000
4.3	Մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված առնվազն 3 դասընթացների կազմակերպում	12,500	2,500	15,000
5	**Միջազգային համագործակցություն**	100,000	20,000	120,000
5.1	Միջազգային առնվազն 2 միջոցառումների կազմակերպում	100,000	20,000	120,000
	ԸՆԴԱՄԵՆԸ (հազ. դրամ)	880,650	119,350	1,000,000